

# Ներքին աուդիտը գլոբալ պանդեմիկ ճգնաժամի համատեքստում

Հովսեփյան Հ. Հ.

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ,  
«Հայփոստ» ՓԲԸ կրտսեր ներքին աուդիտոր,  
ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտոր (Երևան, Հայաստան)  
hripsime.94@mail.ru

**Վճռորոշ բառեր՝** ներքին աուդիտ, պանդեմիա (համավարակ), կորոնավիրուս, ճգնաժամ, հեռահար աուդիտ

## Внутренний аудит в контексте глобального пандемического кризиса

Овсеян Р. О.

Аспирант факультета экономики и менеджмента ЕГУ,  
Младший внутренний аудитор в ЗАО “Айпост”,  
Квалифицированный внутренний аудитор госсектора РА (Ереван, Армения)  
hripsime.94@mail.ru

**Аннотация:** Кризисные ситуации периодически сопровождают человеческую жизнь и различные виды её деятельности, тем самым причиняя им серьёзные неудобства. Таким глобальным кризисом является и новая коронавирусная пандемия, поразившая весь мир. Целью данной статьи является представление воздействия пандемии на внутренний аудит, как важнейшую гарантию эффективной деятельности организации, указывая его основные риски и вызовы. В то же время в статье представлена некая статистика последствий пандемии, освещающая заслуживающие особого внимания приоритетные области и вопросы, которые смогут направить профессиональное общество в процессе реализации дальнейших действий и принятия соответствующих мер.

**Ключевые слова:** внутренний аудит, пандемия, коронавирус, кризис, удалённый аудит

## Internal audit in the context of the global pandemic crisis

Hovsepian H. H.

PhD Student of the Faculty of Economics and Management, Yerevan State University,  
Junior Internal Auditor at Haypost CJSC,  
Qualified Public Sector Internal Auditor of the RA (Yerevan, Armenia)  
hripsime.94@mail.ru

**Abstract:** Crisis situations periodically accompany human life and various types of activity, thereby causing serious inconvenience. The new coronavirus pandemic, which has affected the entire world, is such a global crisis. The purpose of this article is to present the impact of the pandemic on internal audit - an essential guarantee for the effective operation of the organization, identifying the main risks and challenges. At the same time, the article presents some statistics on the consequences of the pandemic, thereby highlighting the main areas and issues, deserving special attention, which can guide the professional society in the process of implementing further actions and taking appropriate measures.

**Keywords:** internal audit, pandemic, coronavirus, crisis, remote audit

Մարդկությունն իր գոյության ողջ ընթացքում պարբերաբար բխվել է ճգնաժամային իրավիճակների՝ ֆինանսատնտեսական, համաճարակա-համավարակային, պատերազմական, տարերային աղետների և այլ տեսքերով: Դրանցից յուրաքանչյուրն իր ուրույն հետքն է թողել ոչ միայն պատմության էջերում, այլև առհասարակ կյանքի որակի փոփոխման և տարբեր բնագավառների, գործունեությունների ու մասնագիտությունների տրանսֆորմացիոն գործընթացներում:

2019թ. վերջերից ի հայտ եկած նոր տեսակի կորոնավիրուսային բռնկումը՝ հայտնի Covid-19 անունով, արագորեն տարածվելով ողջ աշխարհով մեկ և հոշակվելով որպես պանդեմիա (համավարակ), համարեց վերը նշված համաշխարհային ճգնաժամերի ցանկը: Միլիոնավոր վարակակիրներ, հարյուր հազարավոր մահեր. առողջապահական գլոբալ այս խնդիրը հարվածեց և դեռ շարունակում է հարվածել տարբեր երկրների տնտեսություններին՝ իր հետ բերելով նորանոր ռիսկեր և մարտահրավերներ:

Համավարակի տարածման արդյունքում բնականոն կյանքը ենթարկվեց տարատեսակ փոփոխությունների, սովորական թվացող գործունեության տեսակներն ստիպված եղան շարժվել համավարակի թելադրած նոր կանոններով՝ հեռավար ուսուցում, հեռահար աշխատանք, բազմատեսակ սահմանափակումներ, արտակարգ ռեժիմ և այլն: Կյանքի և առողջության համար մղվող պայքարն իրականում տարվում է մի քանի ճակատով, քանի որ համավարակը նպաստեց նաև ֆինանսական և սոցիալ-տնտեսական ցուցանիշների վատթարացմանը՝ գրանցվեց գործազրկության աճ, տնտեսական ակտիվության նվազում, գործունեության մի շարք տեսակների համար կյանքն ընդհանրապես կանգ առավ, իսկ երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները, մեղմ ասած, դանդաղեցին: Այս ամենին զուգահեռ շարունակվում են մշակվել մեխանիզմներ՝ նոր կանոններին համահունչ հնարավորինս արդյունավետ գործունեություն ծավալելու համար, ինչի արդյունքում կարիք է զգացվում նաև վերանայելու և վերաիմաստավորելու մի շարք մասնագիտություններ ու աշխատանքային գործունեության տարբեր ուղղություններ: Այս հարցում, բնականաբար, բացառություն չէ նաև ներքին աուդիտը: Պարզելու համար, թե ինչ նոր խնդիրներ ու մարտահրավերներ են ի հայտ եկել ներքին աուդիտի համար և թե ինչ անելիքներ ունի ու դեռ կունենա այն, նախ փորձենք հասկանալ՝ ինչ է առհասարակ իրենից ներկայացնում ներքին աուդիտը:

Ընդհանուր առմամբ ներքին աուդիտն անկախ, անաչառ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է՝ կազմակերպության գործառնությունները բարելավելու և արժեք ավելացնելու համար: Այն օգնում է կազմակերպությանն իրագործել իր նպատակները՝ հետևողական մոտեցմամբ գնահատելով և բարելավելով ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման գործընթացների արդյունավետությունը [1]: Սահմանումն արդեն իսկ հուշում է, որ ներքին աուդիտը պարզապես չի կարող անմասն մնալ վերը նշված գործընթացներից: Ճգնաժամային իրավիճակներն ուղղակիորեն ազդում են

կազմակերպության արժեքի, հեղինակության, ընդհանուր գործառնությունների վրա և նոր խնդիրներ են ստեղծում ներքին հսկողության համակարգի ու ռիսկերի կառավարման գործընթացների համար: Այս առումով հարկ է հասկանալ, թե ինչ կոնկրետ դերակատարություն ունի ներքին աուդիտը նշված համատեքստում:

Նշենք, որ ուսումնասիրությունների համաձայն՝ լրջագույն բաց կա պոտենցիալ ճգնաժամային իրավիճակների մասով կազմակերպությունների խորհուրդների անդամների իրազեկվածության և այդ իրավիճակներին կազմակերպությունների փաստացի պատրաստվածության միջև: Միևնույն ժամանակ ճգնաժամային փորձագետներն էլ համաձայնության են եկել այն գաղափարի շուրջ, որ ճգնաժամակայունությունը կապված է պատրաստվածության հետ, և ներքին աուդիտն այս գործընթացում առանցքային դերակատարություն ունի: Աուդիտորների լայն հմտությունները, կազմակերպությունում ունեցած դիրքը և գործառնությունների մասով խորը գիտելիքները կարող են օգնել կազմակերպություններին պատրաստվել անխուսափելի ճգնաժամերին և ճանաչողական մակարդակից տեղափոխել վերջիններիս ճգնաժամային ճկուն պատրաստվածության կարգավիճակի՝ պատրաստ դիմակայելու, արձագանքելու և խոշոր քայքայիչ իրադրություններից վերականգնվելու [2]: Այստեղ հարկ է նշել նաև, որ ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտների համաձայն՝ ներքին աուդիտը հաշվետու է կազմակերպության գործադիր ղեկավարությանն ու խորհրդին, ընդ որում՝ կազմակերպական անկախությունն արդյունավետորեն ապահովվում է, երբ ներքին աուդիտի ղեկավարը ֆունկցիոնալ առումով հաշվետու է խորհրդին [3]: Նշվածն առավել պարզ է դարձնում, թե ինչ հարաբերությունների մեջ է գտնվում ներքին աուդիտը կազմակերպության ղեկավարության և խորհրդի հետ և թե ինչ կարգավիճակով ու ինչ հարթություններում կարող է իրականացնել իր գործառույթները:

Անշուշտ, գլոբալ պանդեմիկ ճգնաժամի հետևանքները կազմակերպությունների արժեքի, հեղինակության և տարատեսակ գոր-

ծառնությունների վրա արդեն զգացվում են և դեռ կզգացվեն, քանի որ ճգնաժամն այս կամ այն ձևով թակել է գրեթե բոլորի դռները, և այդ «հյուրին» ընդունելուն դժվար թե բոլորը պատրաստված լինեին: Թեպետ պատմությանը հայտնի են մեծաթիվ և տարատեսակ ճգնաժամային իրավիճակներ, այդուհանդերձ, քիչ չեն այն կազմակերպությունները, որոնք գործունեություն են ծավալում այն համոզմամբ, որ մեծամասշտաբ ճգնաժամեր այլևս չեն լինի, իսկ լինելու դեպքում էլ կշրջանցեն կամ նվազագույն ազդեցություն կթողնեն իրենց գործունեության վրա: Հենց այդ մտայնությունն է այն պատճառներից մեկը, որ կազմակերպությունները պատշաճ պատրաստվածություն չեն ունենում անակնկալ թվացող ճգնաժամային իրավիճակներին դիմագրավելու համար:

Գաղտնիք չէ, որ հատկապես վերջին ճգնաժամերից հետո և՛ ներքին, և՛ արտաքին աուդիտի մասով պարբերաբար բազմաթիվ հարցեր ու քննարկումներ են առաջանում, քանի որ շատ հաճախ միայն լուրջ խնդիրների բախվելուց հետո է ծագում «իսկ ու՛ր էր աուդիտը» հարցը: Կարծում ենք, որ այս ճգնաժամի պարագայում ևս, եթե ոչ արդեն, ապա մոտ ապագայում այդ հարցադրումը կկատարվի, որովհետև արդեն իսկ նշմարվում են կազմակերպություններ, գերատեսչություններ, կառավարություններ, որոնք հաջողել են պանդեմիայի դեմ պայքարում, և այնպիսիք, որոնք ակնհայտորեն ձախողել են այդ պայքարը:

Ճգնաժամային իրավիճակը և գործող տարատեսակ սահմանափակումները մի շարք բարդություններ են առաջացրել կազմակերպությունների համար՝ հաճախորդների սպասարկման, գործընկերային հարաբերությունների և առհասարակ բնականոն աշխատանքային գործընթացների իրականացման հետ կապված: Նշվածն ուղղակի կամ անուղղակի կերպով սպառնում է կազմակերպությունների հեղինակությանը, ֆինանսական կայունությանը, որոշների դեպքում՝ նույնիսկ գործունեության շարունակականությանը: Մեծանում է անհամապատասխանությունների, խարդախությունների (fraud), կիբերվտանգների և նմանատիպ այլ լուրջ խնդիրների առաջացման հավանականու-

թյունը: Մրան գուգահեռ հեռահար աշխատանքը, մասնավորապես՝ հեռահար աուդիտը (remote audit), բախվում է նոր մարտահրավերների: Նոր մեխանիզմների, հնարքների ու տեխնիկաների մշակման անհրաժեշտություն է առաջանում արդյունավետ հեռահար աուդիտի իրականացման համար, որին էլ գումարվում է այն հանգամանքը, որ կազմակերպությունների մի մասի դեպքում, մասնավորապես, տեղեկատվական անվտանգության նկատառումներից ելնելով, սահմանափակվում է հասանելիությունը կազմակերպության ներքին համակարգերին: Եվ, այդուամենայնիվ, նշված պայմաններում էլ ավելի է սրվում ներքին աուդիտի, ինչպես նաև վերջինիս դերի վերաիմաստավորման անհրաժեշտությունը:

Այս առումով հետաքրքրական են Ներքին աուդիտորների ինստիտուտի (ՆԱԻ, ԻԱ), Ներքին աուդիտորների ինստիտուտների եվրոպական կոնֆեդերացիայի (ECIA) և Ernst & Young աուդիտորական կազմակերպության դիտարկումներն ու իրականացրած վերջին հարցումների արդյունքները:

2020թ. ապրիլի 9-13-ն ընկած ժամանակահատվածում ՆԱԻ (ԻԱ) կողմից Հյուսիսային Ամերիկայի ավելի քան 400 ներքին աուդիտի ղեկավարների (Chief audit executive, CAE) շրջանում անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ Covid-19-ի հետևանքով երկարաժամկետ հատվածի համար ֆինանսական կայունության հետ կապված լուրջ մտահոգություններ առկա են առավելապես առողջապահության և սոցիալական աջակցության, արտադրական, կրթական, ինչպես նաև սպառողների անմիջական մասնակցության (consumer-facing) ոլորտներում (մանրածախ առևտուր, սննդի ոլորտ, տուրիզմ), իսկ ամենաքիչը՝ ֆինանսների և ապահովագրության ոլորտներում: Հարցվածների յուրաքանչյուր 10-ից 3-ը նշել են, որ Covid-19-ը հանգեցրել է բյուջեի կրճատման: Ինչ վերաբերում է կարճաժամկետ հատվածում բյուջեի փոփոխությունների համատեքստում ներքին աուդիտի գործառնություններին՝ 59%-ի պնդմամբ փոփոխություններ տեղի չեն ունեցել, 30%-ի դեպքում՝ կրճատվել են, 2%-ի դեպքում՝ աճել: Մասնակիցների 74%-ը նշել է, որ Covid-19-ի

արդյունքում ներքին աուդիտի աշխատակազմում (ներառյալ համապատվիրման (cosourcing) և արտապատվիրման (outsourcing) դեպքերը) փոփոխություններ տեղի չեն ունեցել, 21%-ի դեպքում նվազել են, 3%-ի դեպքում՝ աճել: Հարցվածների գերակշռող մեծամասնությունը նշել է, որ աուդիտի պլանում թարմացումներ են կատարվել՝ հասցեագրելով համավարակի հետ կապված ռիսկերը, իսկ 53%-ի պատասխանների համաձայն՝ ներքին աուդիտի աշխատակազմին պատվիրակվել են ոչ աուդիտորական աշխատանքներ [4]:

Հանրային հատվածի ներքին աուդիտի վրա համավարակի ազդեցության վերաբերյալ ԱՄՆ-ն, Կանադան և Կարիբյան երկրները ներկայացնող ավելի քան 400 ներքին աուդիտի ղեկավարների շրջանում ՆԱԻ կողմից անցկացված հարցումը հետաքրքիր պատկեր է ներկայացնում առանձին հատվածների մասով: Համաձայն նշված հարցման արդյունքների՝ հանրային կառավարման ոլորտում ներքին աուդիտի ջանքերն ըստ առաջնահերթության առավելապես աճել են համապատասխանաբար կիրառանվտանգության և առհասարակ ՏՏ ոլորտի, բիզնեսի շարունակականության, ծախսերի վերահսկման/կրճատման և խարդախությունների հետ կապված աշխատանքների գծով, հանրային կրթության ոլորտում՝ առողջության և անվտանգության, բիզնեսի շարունակականության, ձեռնարկության ռիսկերի կառավարման (Enterprise risk management, ERM) և կիրառանվտանգության գծով, իսկ առողջապահության և սոցիալական աջակցության ոլորտում՝ ծախսերի վերահսկման/կրճատման, բիզնեսի շարունակականության, ERM և համապատասխանության (օրենսդրաիրավական, ոչ ֆինանսական հաշվետվությունների) գծով [5]:

«Covid-19-ի ազդեցությունը հանրային հատվածի ներքին աուդիտի վրա» խորագրով ECIA կողմից 2020թ. մայիսին կազմակերպված վեբինարի շրջանակներում իրականացված հարցմանը մասնակցել են 183 ներկայացուցիչներ տարբեր երկրներից: Հարցվածների 67%-ի պնդմամբ՝ համավարակն ազդեցություն չի թողել ներքին աուդիտի բյուջեի վրա կարճաժամկետ հատվածում,

14%-ի պնդմամբ՝ այն նվազել է, 10%-ի դեպքում՝ աճել: Մասնակիցների 80%-ը նշել է, որ պանդեմիայի պայմաններում ներքին աուդիտի աշխատակազմին աուդիտի հետ կապ չունեցող առաջադրանքներ չեն պատվիրակվել, իսկ 20%-ի դեպքում պատվիրակվել են: Մասնավորապես, Գերմանիայի շատ կազմակերպություններում ներքին աուդիտին այլ ոչ աուդիտորական գործառույթներ են պատվիրակվել, և այս առումով ուշագրավ ասպեկտ է ներքին աուդիտի անկախության պահպանումը: Վերոնշյալ հարցման մասնակիցների 50%-ը նշել է, որ դժվարությունների են հանդիպել հեռահար աուդիտներ իրականացնելիս, ընդ որում՝ չնայած արագության, հարմարավետության և ժամանակի ու միջոցների խնայման տեսանկյունից հեռահար աուդիտի նախընտրելիությանը՝ այն բավականին բարդ է նոր մարդկանց հետ աշխատելիս: Հարցվածների 32%-ը թարմացրել է աուդիտի պլանը՝ հասցեագրելով Covid-19-ի հետ կապված ռիսկերը, 28%-ը նոր ի հայտ եկող ռիսկերի բացահայտմանն է հասցեագրել, 24%-ն էլ՝ ռիսկերի գնահատման վերանայմանը: Մեծ Բրիտանիայում, մասնավորապես, համավարակից տուժածների 3 խումբ են առանձնացրել՝ նշանակալի տուժածներ, մասնակի տուժածներ, նվազ տուժածներ, և ըստ այդմ էլ առավել հեշտությամբ են կարողացել կատարել պահանջվող փոփոխություններն աուդիտի պլանում, ընդ որում՝ ռիսկերի գնահատումն ու աուդիտի պլանը թարմացվել են եռամսյակային կտրվածքով: Ընդհանուր հարցմանը մասնակցածների 52%-ի դեպքում աուդիտի պլանի որոշ հանձնառություններ (engagement) չեղարկվել են, 21%-ի դեպքում՝ նորերն են ավելացվել, 20%-ի դեպքում՝ որոշ հանձնառությունների շրջանակը կրճատվել է, 7%-ի դեպքում էլ՝ ընդլայնվել: Մասնավորապես Իտալիայում հանրային հատվածը 42%-ով փոփոխել է աուդիտի պլանը և ընդլայնել հանձնառությունների շրջանակը՝ ընդգրկելով Covid-19-ի ազդեցությունը. աճել է նաև կիրառանվտանգության ռիսկը հեռահար աուդիտի պայմաններում: Ինչ վերաբերում է ներքին աուդիտի ջանքերին՝ հարցվածների 62%-ի պնդմամբ ջանքերն աճել են ռիսկերի կառավարման, 55%-ի դեպքում՝ բիզնեսի

շարունակականության պլանի, 34%-ի դեպքում՝ կիրքերանվտանգության, 32%-ի դեպքում՝ առողջության ու անվտանգության ուղղությամբ և այնուհետև մարդկային ռեսուրսների կառավարման, նոր կարգավորումների համապատասխանության, ծախսերի և խարդախությունների ուղղությամբ: Մեծ Բրիտանիայում առաջնային ուշադրության են արժանացել ֆինանսական ծախսերի, խարդախությունների, կիրքերանվտանգության, ռիսկերի կառավարման և տվյալների վերլուծության հիմնահարցերը [6]:

Ernst & Young միջազգային աուդիտորական կազմակերպության կողմից 2020թ. մայիսի 14-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ավելի քան 370 CAE-երի և վերջինիս համարժեք ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացված գլոբալ հարցման համաձայն՝ մասնակիցների 42%-ը նշել է, որ հեռահար աուդիտի միջոցով հնարավոր է գրեթե ամեն ինչ աուդիտի ենթարկել: Նշված հարցման արդյունքների համաձայն՝ թուփ ռիսկային ուղղությունների ցանկն ունի հետևյալ տեսքը՝ աշխատակիցների առողջություն և բարեկեցություն, աշխատակիցների ֆիզիկապես վերադարձ աշխատանքի, մատակարարման ցանցեր և գլոբալ առևտուր, տեխնոլոգիաներ և տեղեկատվական անվտանգություն, լիկվիդայնություն, մարդկային կապիտալ և խարդախություններ: Հարցվածների 69%-ը փոփոխություններ է կատարել աուդիտի պլանում, 79%-ն էլ կարծում է, որ կա անհրաժեշտություն և/կամ հնարավորություն ներքին աուդիտի գործառնական մոդելի առնվազն 1 մասի փոփոխման համար [7]:

Մեկ այլ ուսումնասիրություն՝ իրականացված Եվրոպական բանկային վերահսկողության EBA (European Banking Authority) կառույցի կողմից, ներկայացնում է Covid-19-ի արդյունքում ԵՄ բանկերի համար առաջացած հիմնական մարտահրավերները: Ուսումնասիրությունը փաստում է, որ բանկերը պանդեմիկ ճգնաժամ մուտք են գործել առավել կապիտալիզացված և իրացվելի կարգավիճակում, քան նախորդ ճգնաժամների դեպքում (այս առումով, ի դեպ, բացառություն չեն նաև հայաստանյան բանկերը, քանի որ վերջին տարիներին բարձրացվեց բանկերի

ընդհանուր կապիտալի նվազագույն շեմը): Մինևույն ժամանակ՝ ուսումնասիրությունը պնդում է, որ համավարակը բացասական ազդեցություն է ունենալու ակտիվների որակի վրա: Բացի այդ բանկերի գործառնական ճկունությունը գտնվում է ճնշման ներքո: Ի հավելումն՝ բանկերն օգտագործում են իրենց իրացվելիության բուֆերները, և ակնկալվում է, որ առաջիկա ամիսներին ևս կօգտագործեն դրանք [8]: Այսպիսով, ակնհայտ է, որ բանկային համակարգը ևս զերծ չէ գլոբալ պանդեմիկ ճգնաժամի ազդեցություններից, և որ բանկերի ներքին աուդիտի ստորաբաժանումների առջև նույնպես նոր խնդիրներ ու մարտահրավերներ են ծառայել:

Ինչ վերաբերում է Հայաստանին, չնայած հստակ վիճակագրության բացակայությանը, այդուհանդերձ, մասնագիտական քննարկումներից և վեբինարներից պարզ է դառնում, որ Հայաստանում նույնպես ընդհանուր առմամբ անցում կատարվել է հեռահար աուդիտի, թեպետ այստեղ ևս այն զերծ չէ խոչընդոտներից՝ մասնավորապես ներքին համակարգերի հասանելիության, տեղեկատվական անվտանգության, հարցազրույցների անցկացման, ինչպես նաև նոր մարդկանց հետ աշխատելու դժվարությունների առումով: Հանրային հատվածի մասով էլ հարկ է նշել, որ <https://www.tender-monitoring.am/>՝ պետական գնումների վերահսկողության այլընտրանքային կայքում առկա տվյալները փաստում են, որ 2019թ. նոյեմբերից մեկնարկած հանրային հատվածի ներքին աուդիտի արտապատվիրման գործընթացը, եթե ոչ ժամանակավորապես դադարել, ապա առնվազն նշանակալիորեն դանդաղել է:

Վերը նշված ուսումնասիրությունները ևս մեկ անգամ փաստում են, որ համավարակային ճգնաժամը նոր խնդիրներ ու մարտահրավերներ է ստեղծել ներքին աուդիտի ստորաբաժանումների համար, որոնք, թեպետ տարբեր երկրների ու գործունեությունների գծով եղած առանձնահատկություններին, այդուհանդերձ ունեն մի շարք ընդհանրություններ: Շարունակել աշխատել նախապես մշակված պլանով և պատկերացումներով՝ անտեսելով համավարակի ազդեցությունները, բնականաբար ներքին աուդիտի ոչ մի թիմի դեպքում լիարժեքորեն չի հաջողվի,

ուստի անհրաժեշտ է հաշվի նստել ստեղծված իրավիճակի ու պայմանների հետ և մշակել նոր մոտեցումներ ու գործողությունների ցանկեր՝ առավելագույնս հասցեագրելով համավարակային ռիսկերն ու մարտահրավերները և ծածկելով դրանց առաջացրած բացերը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը՝ կարելի կատարել հետևյալ առանցքային եզրահանգումները.

- Ներքին աուդիտն առաջիկայում կարող է խնդիրներ ունենալ կազմակերպության արժեք ավելացնելու, ներքին վերահսկողության և ռիսկերի կառավարման բարելավման գործում իր դերի վերահաստատման ու ամրապնդման գործում, քանի որ կազմակերպություններին ներկա ճգնաժամային իրավիճակում և դրան հաջորդող մոտակա ժամանակաշրջանում առավել քան երբևէ անհրաժեշտ կլինեն շոշափելի արդյունքներ:

- Աստիճանաբար կմեծանա որակյալ խորհրդատվական ծառայությունների մատուցման գործում ներքին աուդիտի դերակատարության աճի պահանջարկը, ինչը մինչև ժամանակ կսրի ներքին աուդիտի անկախության հարցերը, քանի որ շատ նուրբ մոտեցումներ պետք է ցուցաբերվեն այդ գիծը չհատելու համար:

- Ճգնաժամի թելադրած նոր կանոններին համապատասխան մեխանիզմների մշակմանը զուգահեռ անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել այս և նախորդ գլոբալ ճգնաժամային իրավիճակներն իրենց հետևանքներով, ինչպես նաև կազմակերպության պատրաստվածության մակարդակն ու ճգնաժամերի ընթացքում ունեցած հիմնական բարդությունները, և ըստ այդմ հետագայի համար մշակել ռիսկահենք մոտեցում՝ պարբերաբար թեստավորելով և

անհրաժեշտ բարելավումներ իրականացնելով դրանում:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. <https://iaa.am/mandatory-guidance/>, 27.07.2020 (IAA Armenia: Mandatory Guidance)
2. “Global Perspectives and Insights: Crisis Resilience”, Issue 7, The Institute of Internal Auditors, Inc., (The IIA), USA, 2017 ([https://na.theiaa.org/periodicals/Public%20Document s/GPI-Crisis-Resilience.pdf](https://na.theiaa.org/periodicals/Public%20Document%20s/GPI-Crisis-Resilience.pdf), 27.07.2020)
3. International Standards for the Professional Practice of Internal Auditing (Standards): 1110 (Organizational Independence) and 2060 (Reporting to Senior Management and the Board)
4. “Covid-19 impact on internal audit: Survey results about risk assessment, audit plans, staffing, and budget”, The Institute of Internal Auditors, Inc., (The IIA), Audit Executive Center, USA, April, 2020
5. “Covid-19 Regulatory changes: Understanding the public sector regulatory outlook in the wake of the historic pandemic”, The Institute of Internal Auditors, Inc., (The IIA), Public Sector Audit Center, USA, May, 2020
6. “The Impact of Covid-19 for internal auditors in the Public Sector-Webinar report”, ECIIA Public Sector Committee, May, 2020 (<https://www.eciia.eu/2020/04/webinar-the-impact-of-covid-19-for-internal-auditors-in-the-public-sector/>, 27.07.2020)
7. “How chief audit executives are responding to Covid-19”, EY, 21 Jul 2020 ([https://www.ey.com/en\\_nl/consulting/how-chief-audit-executives-are-responding-to-covid-19-in-the-next](https://www.ey.com/en_nl/consulting/how-chief-audit-executives-are-responding-to-covid-19-in-the-next), 27.07.2020)
8. <https://eba.europa.eu/covid-19-placing-unprecedented-challenges-eu-banks>, 27.07.20

Տճանաչանմանվել է՝ 27.10.2020  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 01.11.2020  
 Принята/Ընդունվել է՝ 12.11.2020